չօշափում է պ. Երիցեանը իւր այս 100 երես գրքոյկի մէջ, որը կարդացուում է մեծ լսափչտակութիւնով։ Լեզուն բաւականաչափ կանոնաւոր չէ Նորագոյն աշխարհաբարի տեսակէտից։

Ա. Ա.

ՄԱԼՈՒՄԵԱՆ, Խ.—«ՄՏՔԻ ՄՇԱԿԸ». Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան 25-ամեակի առիթով։ Թիֆլիս, 1890 թ., տպարան Տ. Նազարեանցի, քառածալ, 96 եր., տառ № 12։ Գինն է 50 կ.։

Գրքոյկը պարունակում է հետեւեալ գլուխները. 1) Ներածութիւն, 2) Կենսագրական տեղեկութիւններ, 3) Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան սկզբնաւորութիւնը, 4) Հայոց մամուլի անցեալի մասին, 5) «Մշակի» սկզբնաւորութեան հանգամանքները, 6) Նոր մեթոդ և նոր ուղղութիւն, 7) Ընդհանուր հայեացք Գրիգոր Արծրունու գործունէութեան մասին, 8) Մի քանի գծեր Արծրունու կեանքից, 9) Առաջադիմական չարժումներ։

Առաջին գլուխները հազիւ գուրս եկած՝ արդէն հնացան, որովհետև դրեթէ միաժամանակ լոյս տեսաւ պ. Ալ. Երիցեանի գրքոյկը, որի առջև պ. Մալումեանցի տուած տեղեկութիւնները դրականապէս ոչ մի արժէք չեն կարող ներկայացնել։ «Հայոց մամուլի անցեալի մասին» գլխում բոլորը, ինչ տեղեկութիւններ են, քաղած են Ցարուի մի բրոշիւրից հայոց մամուլի մասին։ Եւ պ. Երիցեանի գրքոյկը նաև այդ կողմից գերազանց է։ Իսկ ինչ վերաբերում է մասնաւորապէս «Հիւսիսափայլ»-ի և «Կռունկ»-ի դնահատութեան, Մալումեանցի գրածը մի շատ թոյլ արձագանք է արդէն ցայժմ լայտնած մտքերի։

Մի փոքր աւելի հետաքրքրութիւն ներկայացնում է 5-երորդ գլուխը՝ «Մշակ»-ի սկզբնաւորութեան մասին. բայց այժմ, երբ այդ մասին նոյն իսկ գործին մասնակցող անձերը հակասող մտքեր են լայտնել—Մալումեանցի պնդումները ճշդութեան տեսակէտից կորցնում են իրանց արժէքը։

«Նոր մեթոդ և նոր ուղղութիւն» գլխում Մալումեանցը լայանում է, թէ մինչև «Մշակ»-ը հայոց մամուլի մէջ տիրում էր քարոզչական մեթոդը, իսկ «Մշակ»-ը մտցրեց բնագիտական մեթոդ մեր հրապարակախօսութեան մէջ։ Առաջին ածականը Մալումեանցը վերցրել է Ա. Արասխանեանցի լօդուածից Ստեփան Նազարեանի հրապարակախօսութեան մասին, երկրորդ ածականը հեղինակը վերցրել է Արծրունու մի լօդուածից՝ իւր սեպհական հրապարակախօսութեան մասին։ Բայց որքան գրչի սխալ էր այդ Արծրունու կողմից, նոյնքան ոչ պատուաբեր կրկնութիւն է թւում այդ

Մալումեանցի կողմից։ Եւ ի զուր չէ սպրդել գրքոյկի 13-երորդ երեսում մի բնորոշ տպագրական սխալ, իբր թէ Հէյդելբերգում Արծրունին «գըլխաւորապէս լսում էր Բաուլ Կնիս, Բլունչլի և Տրէյչկէ պրոֆեսորներին (որոնք տնտեսագէտներ և պատմաբաններ են), միևնոյն ժամանակ... լսում էր Հելմհոլցի բնական գիտութիւնների ընդհանուր հետևանքները» և այլն։

Հեղինակի համար ամենակարեւոր գլուխը պէտք է եղած լինէր գլուխ VII՝ «Ընդհանուր հայեացք Գ. Արծրունու գործունէութեան վերայ»։ Բայց քննադատական զգացմունքի կատարեալ բացակայութիւնը հեղինակի մէջ դարձնում է գրքոյկի այդ գլուխը անուսանելի, չը նայած որ չափազանցութիւնների և սխալների հետ խառը կան և ճշգրիտ տողեր։

Վերջ։ Մալումեանցի գրքոյկը նպաստ չէ հայկական և ոչ իսկ ընթացիկ գրականութեան։ Նոր ոչ տեղեկութիւն կայ և ոչ միտք. բայց թէ տեղեկութիւնների և թէ մտքերի կողմից հեղինակը ցոյց է տալիս իրան կատարեալ անձեռնհաս։ Միակ գնահատելի կողմերը՝ արտաքին կողմերն են՝ թուղթը, տիպը, ոգևորված ոճը և նիւթի լաչող դասաւորութիւնը։

Ես գնահատում եմ մի հեղինակի ոգևորութիւնը. բայց երբ մի հեղինակ, ոգևորելով, այն տպաւորութիւնն է անում, որ, կարծես լաւ չը մարսած բաներից է խօսում,— այդպիսի ոգևորութիւն ընդունակ է միայն սառնութիւն յառաջացնելու։

Ա. Ա.

ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԳԷՈՐԳ.—«ՕՐԻՈՐԴ ՆԱԴԻԿ ԿԻԼԻԿԵԱՆ» (Բոպէներ) և Ցաւելած (բանաստեղծութիւններ). քառածալ, 71 երես. Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի, 1890։ Գինն է 30 կոպ.

Այս գրքոյկի մեծագոյն մասը (55 երես) կազմում է մի ընդարձակ ոտանաւոր, որի համառօտ բովանդակութիւնը հետևեալն է.

Թիֆլիսի մի խուլ փողոցի վերայ գտնուող խարխուլ տներից մէկում ապրում էր թոկեր մանող խեղճ Արտուշը իւր կնոջ՝ Անանի և իւր միակ դստեր՝ Նադիկի հետ։ Մայր ու աղջիկ օգնում էին Արտուշին, բայց ինչ ասել կ'ուզէ, որ ընտանիքի նիւթական դրութիւնը աննախանձելի էր.

Խիստ դանդաղ քալլով (?) անց էին կենում
Զարքաչ օրերի ձիք ձիք (ձ՝ղ ձիգ ?) ժամերը.